

ԿԱՐԴԻՆԱԼ ԺԱՆ ՎԻԼԼԲՐԱՆԴԻ ՆԱՄԱԿԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ*

Ձերդ Սրբություն,

Մոտենում են մեր Տեր Հիսուս Քրիստոսի Ծննդյան տոնակատարությունները, և մենք արդեն սկսել ենք ավելի գիտակցորեն նախապատրաստվել այդ տոնակատարություններին Հիանյակի արարողություններով: Ուզում եմ օգտվել այս առիթից և դիմել Ձերդ Սրբությանը՝ արտահայտելու համար իմ ամենաբարի մաղթանքները, որպեսզի սուրբ Ծննդյան տոնի այս նախապատրաստությունը առավել արժանի դարձնի մեզ ընդունելու Քրիստոսի մարդեղության շնորհները:

Միաժամանակ ցանկանում եմ ինչպես իմ, այնպես էլ Նորին Գերազանցություն Ռոման Տորելլա եպիսկոպոսի և հոգեշնորհ հայր Ջոն Լոնգի անունից Ձերդ Սրբությանն արտահայտել մեր երախտագիտական խոր զգացումները այն չափազանց տպավորիչ օրերի համար, որ մենք՝ սուրբ Աթոռի պատվիրակության անդամներս, ապրեցինք ձեզ մոտ, Մայր Աթոռ ս. Էջմիածնում, սրբալույս մեռոնի օրհնության և Ձեր գահակալության քսանհորդ տարեդարձին նվիրված հանդիսությունների առիթով:

Մենք խորապես զգացվեցինք եղբայրական այն սրտագին ուշադրությունից, որ Ձերդ Սրբությունը բարեհաճեց ցուցաբերել մեր նկատմամբ ամեն առիթով: Մենք մեծապես ազդվեցինք նաև ձեր հավատացյալների կողմից

---

* 1976 թվականի սեպտեմբերի վերջերին Մայր Աթոռում տեղի ունեցավ սրբալույս մեռոնի օրհնություն և նշվեց Վեհափառ Հայրապետի գահակալության քսանամյակը:

Սույն հանդիսություններին ներկա եղան քույր եկեղեցիների հոգևոր պետեր և բարձրաստիճան ներկայացուցիչներ, որոնք Մայր Աթոռից մեկնեցին հոգելից արարողություններից ստացած անմոռանալի տպավորություններով:

Այս առթիվ Մայր Աթոռում ստացվեցին հանդիսություններին մասնակցած բարձրաստիճան հյուրերից բազում նամակներ, որոնցում արտահայտվում էին և՛ ջերմ գոհունակության, և՛ սրտաբուխ շնորհակալության անկեղծ զգացումներ դեպի Հայոց Հայրապետը և Մայր Աթոռ ս. Էջմիածինը:

Ստորև սիրով հրատարակում ենք ստացված բազում գրություններից մեկը՝ Նորին Սրբություն Պողոս Զ Պապի ներկայացուցիչ Նորին Գերազանցություն կարդինալ Ժան Վիլլբրանդի նամակը՝ ուղղված Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին:

ցուցաբերված համակրանքի ջերմ արտահայտություններից, երբ նրանք իմացան, որ եկել ենք ներկա գտնվելու հանդիսություններին: Մենք գնահատեցինք բարեպաշտությունն ու ջերմեռանդ հավատը հայ հավատացյալների, որոնք հոգեպես առաջնորդվում են իրենց Հովվապետի՝ Ձերդ Սրբության հավատավոր կյանքի վկայությամբ:

Ուզում եմ վստահեցնել Ձերդ Սրբությանը, որ մենք, մեր կողմից, ցանկանում ենք օգտվել հնարավոր ամեն առիթից՝ շարունակելու և խորացնելու համար մեր եղբայրական հարաբերությունները Հայաստանյայց առաքելական եկեղեցու հետ Հայաստանում և սփյուռքում:

Խնդրում եմ, Ձերդ Սրբություն, ընդունել մեր երախտագիտական զգացումների հետ մեր հարգալից սիրո հավատիքը ի Տեր մեր Հիսուս Քրիստոս:

ԿԱՐԴԻՆԱԼ ԺԱՆ ՎԻԼԼԵԲՐԱՆԴՍ
Արքեպիսկոպոս Ուտրեխտի, նախագահ
Քրիստոնյաների միության քարտուղարության

Վատիկան,
10 դեկտեմբերի 1976 թ.